

**ՓԱՏԱԹՂԹԵՐ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՒԿԻՈ ՆՈՐԱՇԵՆ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ**

ԺԹ. դարի սկզբներից Թիֆլիսում գործող 25 եկեղեցիներից¹ մեկը Կուկիայի² Նորաշեն Ս. Աստուածածին եկեղեցին էր: «Յանկ Նայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայս» 36 համարանոց ցուցակում 25-րդ համարի տակ գրված է՝ «Կուկիայ Սուրբ Գրիգոր, շինեալ են ի Կուկիայ բնակողքն թուին Նայոց ՌՄԼԸ. (1789)³»: Նույնն է վկայում նաև Գյուր քահանա Աղանյանը⁴: Նավանաբար Աղա-Մահմադ խանի արշավանքի ժամանակ՝ 1795 թվականին, այս եկեղեցին եսս ավերվել է, քանի որ 1807 թ. այն վերակառուցվել ու օծվել է՝ սրբանալով նոր անուն. «Կուկիա կոչված թաղում կա եկեղեցի փոքր, հանուն ամենասրբուհի Աստվածածնի, կառուցված քարուկրով, առանց գմբեթի և աղյուսով ծածկված, որ շինել է տեղական ժողովուրդը 1807 թվին»⁵:

Նայտնի է, որ 1853 թ. Վրաստանի և Իմերեթիայի Նայոց վիճակային կոնսիստորիան լսել է Կուկիայի Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգելու խնդիրը: Արդեն մեկ տարի անց հարց է հարուցվում ոչ թե հին եկեղեցին վերանորոգելու, այլ՝ նորը կառուցելու մասին: 1854 թ. ապրիլի 1-ին եկեղեցու ծխականներն Ամենայն Նայոց Կաթողիկոսին մատուցած խնդրագրում նշում էին, «թե ըստ քրիստոնեական պարտադրության իրենանց ցանկալով նոցա ունել զվայելուչ տեղի աղօթից, քուեալ են կազմել առ այն զպլան և ֆասադ, գոր և մատուցեալ են ի հաստատության Տեառն փոխարքային Կովկասու»⁶:

Ժամանակի մամուլում եղած հայտարարության համաձայն՝ Կուկիայի Ս. Աստվածածին եկեղեցու հիմնօրհները տեղի է ունեցել 1866 թ. հունիսի 26-ին⁷: Մեզ չհաջողվեց պարզել եկեղեցու կառուցման ավարտի ճշգրիտ թվականը, սակայն ստույգ հայտնի է, որ 1898 թ. հուլիսի 4-ին Վրաստանի և Իմերեթիայի Նայոց վիճակային կոնսիստորիան, ընդառաջելով Կուկիայի Նորաշեն Ս.

1 Թիֆլիսի գործող հայ առաքելական 25 եկեղեցիները բաժանված էին երկու գործակալությունների. Ա. մաս-Վանաց Մայր եկեղեցի, Ս. Սարգիս, Նրեշտակապետաց, Կաթողիկե Ս. Գեորգ, Բերդեհեմի Ս. Աստվածածին, Կուսանաց Ս. Սյրեպիանոս, Քարափի Ս. Նալբե, Մոսկոմ Ս. Գեորգ, Նորաշենի Ս. Աստվածածին, Զգրաշենի Ավետյաց Ս. Աստվածածին, Ս. Նշան, Տափի-թաղի Ս. Գեորգ, Զրկինյաց Ս. Կարապետ, Վերայի գերեզմանատան Ս. Խաչ, Բ. մաս - Թանդոյան Ս. Աստվածածին, Կուկիայ Ս. Աստուածածին, Չուդոյեթի Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Միլաս, Էջմիածնեցվոց Ս. Գեորգ, Շամբրեցվոց Ս. Աստվածածին, Չորաբաշի Ս. Գեորգ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Նավթլուխի Ս. Գեորգ, Խոջի վանքի Ս. Աստվածածին:

2 ԺԹ. դարի սկզբին Կուկիան գյուղ էր, այնուհետև՝ Թիֆլիսի արվարձան, ապա՝ քաղաքամաս:

3 Պ. Մուրադյան, Նին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 112:

4 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 102, թ. 18:

5 Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Նայաստանի և հայերի մասին, Կ. Գ., Երևան, 1955, էջ 265:

6 ՆԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 7:

7 Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Նայաստանի և հայերի մասին, Կ. Գ., Երևան, 1955, էջ 265:

Աստվածածին եկեղեցու երեսփոխանի խնդրանքին, միջնորդություն է հարուցել Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդի առջև եկեղեցու վերանորոգման համար եկեղեցապարկան գումարներից 1000 ռուբլի ծախսելու թույլտվության մասին:

Կուկիայի Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցին պետության կողմից փակվել է գրավվել է 1923-24 թթ.⁸, իսկ 1940-ականներին քանդվել:

Ներկայացված փաստաթղթերը հայտնաբերվել են Հայաստանի ազգային արխիվի թ. 56 (Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ) և թ. 53 (Վրաստանի և Իմերեթիայի Հայոց վիճակային կոնսիստորիա) հավաքածուներից:

Փաստաթղթերը փաթեթավորվում են առաջին անգամ՝ բնագրի լեզվով, ուղղագրական և կերպարական որոշ ճշտումներով:

ՍԱՆԱԿ ԱԲԵՂԱ ՇԱԲԱՐՅԱՆ

8 «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք Գ., Երևան, 1997, էջ 525:

1.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ԼՈՒՍԱԽՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս.
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՓԱՅՏԱՇԷՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂՈՒՄ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ
ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թ. 1037

10 Մայիսի 1866 թ.
Տփլիս

Ի ԼՈՒՍԱԽՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
Ի ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ

Յայտարարութիւն

Ի Կոնսիստորիա լուեալ զառաջարկութիւն երեցփոխանի Կոնկիոս փայտաշէն սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Տիտուլեարնի սովետնիկ Յովսէփայ Ախշարումեանց ի 20-ն Ապրիլ ամսոյս, յորում գրի թէ. «Որպէս յայտ է հոգեւոր Ատենիդ ի գրաւոր առաջարկութեան պատուաւոր քաղաքացւոյ Իսահակայ Մարտիրոսեան Թանդոյեանց, որ ի մասին վերանորոգութեան Կոնկիոյ փայտաշէն սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ: Ուստի համաձայն իւրոյ առաջարկութեան եւ խոստման բարեհաճի այժմէն իսկ չափու կարողութեան իւրոյ եւ ձեռնտուութեամբ եւ օգնութեամբ շրջակայ ժողովրդականաց, որք ջերմեռանդ սիրով կամին մասնակցել շինութեան տանն Աստուծոյ, ձեռնարկել շինութեան յիշեալ եկեղեցւոյն: Առ այս մեք կամելով ձեռնտու լինել Աստուածահաճոյ գործոց պ. Թանդոյեանցի, ըստ յաջողելոյ ժամանակին ի ներկայ ամսոյս ստորագրութեամբ ի ժապաւինեալ մատենի, որ ի հոգեւոր Ատենիդ, ժողովեցաք բաւականաչափ դրամս, որք ըստ խոստացելոյն պ. Թանդոյեանցի գոյեացան իբրու գերիս հազար ռուբլիս: Ուրեմն յայտ լիցի հոգեւոր Ատենիդ թէ այժմ առ ի նախապատրաստելոյ նիւթեղենաց եւ պարագայից շինութեան յիշեալ եկեղեցւոյ գտանի առ ձեռն

պատրաստի դրամ, գործէ ամենախոնարհաբար խնդրեմք ի հոգեւոր Ատենէդ զարժանին տնօրէնութիւն, ընդ սմին առաջարկութեան առաջի առնեմք հոգեւոր Ատենիդ զմակարդակ եւ զձեւակերպութիւն յիշեալ եկեղեցւոյն՝ բաղկացեալ երկուց օրինակաց, որոց վասն խոնարհաբար խնդրեմք տնօրինել եւ առաջարկել ի հաստատութիւն ուր հարկն է»։ Եւ զտեղեկութիւնս ի գործոց յորոց երեւի, Թիֆլիզոյ քաղաքացի Իսահակն Մարտիրոսեան Թանդոյեանց խնդրագրաւ մատուցելով նախկին զինւորական Նահանգապետին Թիֆլիզոյ ի 29-ն Փետրվարի 1856 ամի խնդրեալ է թոյլատրել թաղել զգլի հանգուցեալ մօր իւրոյ թինաթինի ի գաւիթ Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ, ըստ նախընթաց համաձայնութեան հոգեւոր իշխանութեան եւ ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն խոստացեալ է նորոգել ըստ հաստատեալ իշխանութենէ ձեւակերպութեան եւ մակարդակի՝ պայմանաւ արկանելոյ զնոր հիմն այնր եկեղեցւոյ մինչեւ ցարտաքին երեսս որմոցն՝ ի հաշիւ իւր, եւ ի վերայ հիման այսր խոստման նորա հոգեւոր իշխանութիւն թոյլատրեալ է թաղել զհանգուցեալն ի գաւիթ այնր եկեղեցւոյ։ Կարգադրեցին. ~ Որովհետեւ ըստ նկատման Ատենիս կարեւոր է անշուշտ կառուցումն նորոգ հոյակապ եկեղեցւոյ ի տեղի հին փոքրադիր եւ փայտաշէն նոյնպիսւոյ, որ մերձ է ի կործանումն ըստ բազմութեան ժողովրդականաց, մանաւանդ զի հետ զհետէ առաւելուն ժողովրդականաք տեղւոյն ի պատճառ յարմարաւոր տեղի գոլոյ բնակութեանց, վասն որոյ զառաջարկեալ յերիցփոխանէն մակարդակս եւ զձեւակերպութիւնս կազմեալս յերկուս օրինակս ընդ գրութիւն սորին առաքելով առ քաղաքական Նահանգապետն Թիֆլիզոյ, խոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Նորին Գերազանցութեան հաստատելոյ զայնս ըստ սահմանեալ կարգին եւ զմի օրինակ նորին վերադարձուցանելոյ Ատենաս վասն ըստայնմ կառուցանելոյ զեկեղեցին։ Անկախ ի վերոյգրելոցն խնդրել ի Նորին Գերազանցութիւնէ հրամայել ում հարկն է մինչ ցհաստատութիւն առաքեալ ձեւակերպութեանն չ'արգելուլ զհիմնարկութիւն եկեղեցւոյ ըստ այնմ ձեւակերպութեան, զի մի՛ ի պատրաստի եղեալ պարագայք վասն հիմնարկութեան նորին ի կորուստ դարձցին, եւ զտնօրէնութենէն բարեհաճեցի ծանուցանել Ատենիս, զայսմ տնօրէնութենէն սորին առանձին հրամանաւ տալ զիտել երեցփոխանին յիշեալ եկեղեցւոյ Աստիճանաւոր Ախշարումեանցին եւ պատուիրել նմա՝ զաշխատութիւն յանձն առեալ երթեւեկեսցէ ի

պատշաճեալ դատարանս, վասն փութով ի կատար հասուցանելոյ զայս գործ, զվերոյգրելոցն ամենից ամենախոնորհաբար յայտնել Սինոդիդ սրբոյ էջմիածնի ի տեղեկութիւն:

Ատենապետ Կոնսիստորի ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Անդամք ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐԶԵԱՆՅ
ՄՈՎՍԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՅ
Ատենադպիր Ա. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4767, թթ. 4-5, բնագիր, ձեռագիր:

2.

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱԿԱՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ
Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՍԱՀԱԿ
ԹԱՆԴՈՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թ. 23

9 Փետրվարի 1868 թ.

Տփլիս

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՋՆԱԿԱՏԱՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ
ԳԷՈՐԳԱՅ Դ. ԵՒ ԱՍՊԵՏԻ
Ի ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԷՆ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ

Յայտարարութիւն

Տփլիսայ անձնական պատուաւոր քաղաքացի Իսահակն
Թանգոյեանց ըստ սովորական մարդասիրական բարեգործութեան իւրոյ
առաւել եւս գերազանց հանդիսացաւ ի ժամանակս Առաջնորդութեան
իմոյ ի Տփլիս ազգօգուտ բարեգործութեամբք:

Սա ըստ իւրումն յօժարակամ ցանկութեան առեալ զգրաւոր
համաձայնութիւն Կոնսիստորիային Տփլիսայ՝ նախ՝ շինեաց ի

Յունիս ամսեան 1963 ամի իւրով սեփական ծախուք ի գաւիթ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Տփլիսայ որ ի Կուկիայ գերկյարկեան ծխական ուսումնարան մանկաց, յորում յայնմհետէ ուսանին ճրիաբար աւելի քան զքառասուն մանկունս չքաւոր ծնողաց՝ հոգալով զբոլոր վարձս ուսուցչաց եւ զայլ ծախսս սոյն ուսումնարանի ի սեփականութեանց իւրոց ըստ իւրումն պայմանի: Երկրորդ՝ խրախուսեալ գոլով նորան առաւել եւս յազգասիրական ջերմեռանդութենէ շինեաց իւրով ծախիւք ի կողմն յԱրեւելից Հիւսիսոյ նոյն գաւթի յանցեալ 1867 ամի նոյնպէս ըստ գրաւոր համաձայնութեան Տփլիսայ Կոնսիստօրիային ի վերայ եկեղեցական ի բազում ժամանակաց հետէ ամայի եւ ապարդիւն մնացեալ տեղւոյ զհինգ կրպակս, վասն վարձու նոցին մշտնջենաւոր պահպանութեան եւ կառավարութեան կառուցեալ իբրեւ ուսումնարանի յորոց ի սկզբան ստացեալ լինին վարձք երեք հարիւր ռուբլիս արծաթոյ եւ հետ զհետէ յուսալի է, զի ըստ յարմարութեան տեղւոյն առաւել եւս արդիւնաւորեսցին: Երրորդ՝ ունի նա զկամս ըստ գրաւոր յայտարարութեան իւրոյ, որ ի Կոնսիստօրիայն, շինել ի կարգի նոյն իսկ կրպակաց ծախուք իւրովք զհինգ եւս նոյնօրինակ եւ միատեսակ կրպակս ի դատարկ եկեղեցական տեղւոջ եւ զարդիւնս նոցին բոլորիցն դարձուցանել յօգուտ նոյն ուսումնարանի եւ եկեղեցւոյ, եւ զկարգադրութիւն վասն այսր ամենայնի յանձն առնու առնել անդառնալի կտակաւ ըստ օրինաց: Եւ չորրորդ՝ իսկ վասն նոյն եկեղեցւոյն, որ ի գաւիթ անդ՝ հարկաւոր համարիմ յայտնել Զերում Վեհափառութեան, թէ եկեղեցիս այս գոլով կառուցեալ ի փոքրիկ եւ անյարմար տախտակեայ ծածկոցէ, որպէս եւ այժմ իսկ կարելի է տեսնել ի մնացորդ դրութենէ նորին՝ ի պատճառս չքաւորութեան տեղաբնակ հին Կուկիեցի ժողովրդոց՝ յիշեալ Թանդոյեանցն ըստ իւրումն քրիստոնէական գզացման փոխանակ նոյն տախտակաշէն եկեղեցւոյ հիմնարկեաց իւրով ծախուք զընդարձակագոյն քարուկրեայ եկեղեցի, որ ունի հետ զհետէ կանգնել օժանդակութեամբ նորա եւ այլոց հայազգի ժողովրդոց:

Այսօրինակ եռանդագին նախանձաւորութիւն, օրինակելի եւ հազուագիւտ սխրագործութիւն յիշեալ Իսահակայ Թանդոյեանց յասպարէզի քրիստոնէական եւ ազգասիրական բարեպաշտութեան, ըստ սրբազան օրինաց Կայսերութեան համայն Ռուսիոյ՝ արժանի կացուցանեն զնա Արքայական պարգեւատրութեան՝ շքանշանի սրբուհւոյն Աննայի

Յորդ աստիճանի որպէս ի տրիտուր ճշմարիտ արժանաւորութեան նորա եւ ի իւրախոյս առ առաւել ջերմեռանդութիւն ի բարի գործս, նոյնպէս եւ յօրինակ ալլոց: Զորմէ յայտնելով մատուցմամբ ցուցակի ծառայութեան յիշեալ իսահակայ Թանդոյեանց պատիւ ունիմ խոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն Զերդ Վեհափառութեան յաղագս վարձատրելոյ զնա յիշատակեալ շքանշանաւ:

ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5215, թ. 6 եւ շրջ., 10, բնագիր, ձեռագիր:

3.

ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ
ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝
ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅ ԽԱԶԱՏՈՒՐ ՏԷՐ ԽԱԶԱՏՐԵԱՆՑԻՆ
ԱԻԱԳՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 նոյեմբերի 1871 թ.
Տփլիս

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Դ.-Ի
Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՅ ԵՒ ԺԱՄԱՒՈՐԱՅ ԿՈՒԿԻՈՅ ՍՈՒՐԲ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԻՖԼԻԶՈՅ

Խնդիր

Օրէն է բնութեան գնահատել զաշխատանս վաստակաւորաց հարկ ի վերայ կայ իշխանութեան եւ մեր ճանաչել զարթուն եւ հսկող հովիւս եկեղեցւոյ, որք ժողովն զմեզ ի փարախ Քրիստոնէական սուրբ հօտի, եւ առնեն զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տունջեան, յորոց միին է նաեւ Կոնկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ միաբան եւ ժամօրհնող Արժանապատիւ Խաչատուր քահանայն Տէր Խաչատրեանց, նա յօրէ բարձրանալուն յաստիճան քահանայութեանս ընդ արդիւնաւոր մշակութեամբ իւրով տան Աստուծոյ գրաւեալ է զվարկումն ծայրագոյն իշխանութեան քաղաքիս: Այսու ամենայնիւ քաջածանօթ է մեզ՝

զի նա վասն արիաջան աշխատութեան, գովանի վարուց եւ գեղեցիկ ժամերգութեանց ստացեալ է զքահանայական արծաթեայ ոսկեզօծ խաչ եւ կամելաւկայ անուանեալ գլխահարկն կոնդակաւ ի Տէր Հանգուցեալ երջանկայիշատակ Մատթէոս Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի 1863 ամի:

Ուստի նկատելով մեք ամենեքեանքս ի նմա վասն քրտնաջան աշխատութեան, ի պայծառութիւն տաճարի Տեառն Աստուծոյ եւ ի հովուութիւն հաւատացեալ հօտին Քրիստոսի յայտնեմք յայն մեք զնմանէ զմեր շնորհակալութիւն եւ վասն նորոյ ի լրումն եւ եթ բաղձանաց մերոց եւ ի մխիթարութիւն սրտի մերոյ ամենախոնարհաբար խնդրեմք ի Ձերդ Վեհաստիճան սուրբ Օծութեանդ, վարձատրել զնա յԱւագ Քահանայութեամբ, որով ունելով միշտ եւ ունիք երախտապարտ կացուցանել մեզ եւ մաղթարար յարաժամ վասն անգին կենաց Ձերդ Հովուապետական Բարձրութեան եմք եւ մնամք գթութեամբ բաւարարութեամբ խնդրանաց մերոց, մեք ամենախոնարհ ծառայքս առ որ ստորագրեմք:

(յետեւում է 43 ստորագրութիւն)

Մակագրութիւն. Յանձնեմք Սինօդին պահանջել զտեղեկութիւնս ի թեմակալ Առաջնորդէն, թէ քանի քահանայք եղեն ի Կոկիոյ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ, ունիցի արդարեւ հարկաւորութիւն եկեղեցին այն Աւագ Քահանայի, եւ արժանաւոր իցէ Քահանայն նոյն կոչման եւ այլն¹:

ԳԵՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

11 Դեկտեմբերի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5991, թ. 1-3, բնագիր, ձեռագիր:

1 1873 թ. Յուլիսի 31-ին Վրաստանի եւ Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիան Սինօդին եղած գրութեան մէջ նշում է. «...Ի Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ գոն այժմ երկու քահանայք, եկեղեցին այն արդարեւ ունի կարօրութիւն Աւագ Քահանայի, որ ունիցի նսկել մշտապէս ի վերայ բարեկարգութեանց եկեղեցոյ եւ Քահանայից եւ թէ րեւոյն խաչապար Քահանայն Տէր-Խաչապարեանց բաց ի քահանայագործութենէ ի 1858 ամէ հետէ եւ ի ժամօրհնօղութենէ ի 1870 ամէ հետէ յեկեղեցոյ այնմիլ՝ չունի զայլ արդիւնաւոր ծառայութիւն» (Ֆ. 56, ց. 1, գ. 5991, թ. 4): Նոյն թուի Նոյեմբերի 9-ին խաչապար Քահանայ Տէր Խաչապարեանցին շնորհունել է Աագութեան ասորիճան (անդ, թ. 5):

4.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷթԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ
ԿՈՆՍԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱԻՈՐՁԱԿԱՆ
ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻ ԴԱՏԱԽԱՋԻՆ՝ ՆՈՐԱՇԷՆ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԳՈՂՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Թ. 871 3 Մայիսի 1873 թ.
Տփլիս

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋՆԻՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՊՐՕԿՈՒՐՕՐԻՆ
ԼՈՒՍԱԻՈՐՁԵԱՆ ՀԱՅՈՑ
ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի Կոստանտինուպոլիս լուեալ նախ զյայտարարութիւն երեցփոխանի
Կոնկիոլ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ, Տիտուլեարնի
Սոփէտնիկ Բաղդասարայ Փիւրատեանց յՅն Մայիս ամսոյս, յորում
գրէ, թէ ի մէկն ներկայ ամսոյս Մայիսի ժամակոչն եկեղեցւոյ մերում
Մովսէս Բէգիջանեան անձամբ եկեալ ի տուն իմ ի վեցերորդ ժամու
առաւօտուն յայտնեաց՝ թէ աւագակք ի նոյն գիշերի կողոպտեալ են
զեկեղեցին, եւ իմ նոյն ժամայն գնացեալ հանդերձ քանի մի անձամբք, եւ
վերահասու եղաք տեսաք, զի դուռն հիւսիսային կողմանն կայր առանց
փակակալի բացեալ, որք են ի ներքուստ երկու երկաթեայ կարթք եւ
տեսեալ զաւագ խորանն, յորում պահին մոմագինք, զի երկաթեայ կապ
դրանն արձակեալ կայր յամրացուցիչ բեւեռացն եւ չերեւէին բեւեռք,
եւ հետաքրքիր եղեալ տեսաք՝ զի յերկու թղթարկեղ պահեալ արծաթ
եւ թուղթ դրամք, որք հասանէին մինչեւ ի հարիւր յիսուն ռուբլիս
չ'կան ի տեղւոջն, իսկ ի միւս անկեան կային այլ եւս ի մէջ թղթի
շուրջառգինք երեսուն եւ մի ռուբլի քսան կօպէկ, որք անխախտ էին
ի տեղիս իւրեանց, եւ ի ներքին պատուհանի ի մէջ փայտարկեղ կային
պղնձադրամք, եւ այնք եւս անխախտ, եւ մոմք բազումք դարձեալ
անշարժք, եւ ամենայն զարդք եկեղեցւոյն ամենեւին անշարժ ի տեղիս
իւրեանց, բայց յայսմանէ ի մոմավաճառութեան սեղանի արկեղէն այլ
եւս պակասեալ էին դրամք ժամկոչին հնգետասան ռուբլի, եւ Հախբատի

անուանեալ գանձանակադրամոց տուփին խորտակեալ եւ տարեալ, զի նմա գտեալ դրամս անյայտ թուով, իսկ տուփ գանձակի յանուն որբոց եւ այրեաց, որ էր ի նոյն իսկ տեղւոջ՝ մնայր անխախտ, առ որ ճշտութեամբ հետաքրքիր եղեալ՝ անկարելի թուեցաւ մեզ՝ հիւսիսային դրան առանց ինչ խորտակման նշանի ինքն ըստ ինքեան բանիլ, որ եւ յետ միոյ ժամու վերստին ժամակոչն ազդ արար մեզ, թէ յարեւմտեան կողմանէ, ուր կայ ճանապարհ վերնատան ծածկեալ ամրապէս տախտակօք եւ հողով, զայն քակեալ եւ անտի ի վայր եղեալ, եւ տեսեալ երեւիւր հող ինչ իջեալ յառաստաղէն, սակայն կատարելաբար եւ հաւաստի քննեալ զելս գործոյն՝ անհնար գրէթէ համարեցաք անտի մուտ գործել առն յեկեղեցի, եւ զայսչափս միայն քաղեալ տեղեկութիւն յայտ առնել Սրբազան Ատենի սորին ի տեղեկութիւն պարտ համարիմ: Եւ երկրորդ՝ զյայտարարութեան Բարեկարգչի եկեղեցեաց Թիֆլիզոյ ի 4-էն ամսոյս համարաւ 16, յորում գրի, թէ յ2-ն Մայիս ամսոյս հրաւիրեալ գովով իմ ի թաղումն Գասպարոյ Սայիփեանց, եւ տարեալ զննեցեալն յեկեղեցին, որ մերձ ի կամուրջն, յայնժամ Խաչատուր Քահանայ Տէր Ինալատրեանց յայտնեաց ինձ թէ յ31-ն Ապրիլի յերկուշաբթի աւուրն յերկոյն մինչ լուսանայր երեք շաբաթն ի 1-ն Մայիսի, աւազակքն մտեալ են յեկեղեցին առանց խորտակման դրանց եկեղեցւոյ եւ միայն խորտակելով զծխնիսն դրանց երեցփոխանական խորանի՝ գողացեալ են եկեղեցապատկան դրամսն միայն, իսկ որքանութիւն դրամոց ո՛չ գիտեմ, ասէ, նոյնպէս բացեալ են զտուփն Հախբատայ գանձակադրամոց եւ բոլորովին դատարկեալ են, որ ժողովեալ լինէր ի 1-էն անցեալ Յունուարի, եւ յետ այսր ամենայնի գտի փութով զերեցփոխանն նոյն եկեղեցւոյ պ. Բուղդանն Փիրատեանց եւ հարցի ի նմանէ գորքանութիւն գողացեալ դրամոց ի խորանէ անտի, եւ նա յայտնեաց, թէ մինչ ցհարիւր յիսուն ուրբի տարեալ են, իսկ զքանակութիւն տփոյն Հախբատայ ինձ յանյայտ է ասաց եւ յետ այսորիկ յիշեալ երեցփոխանն եցոյց ինձ զյարկն եկեղեցւոյ, ուր բացեալ էր մի տախտակն միայն յարեւմտեան կողմն, որպէս թէ անտի մտեալ են գողք: Զորմէ յայտնելով Ատենիս՝ խնդրէ զհեռաւորն տնօրէնութիւն սորին: Կարգաւորեցին. — Որովհետեւ ի յայտարարութիւնէ անտի երեցփոխանին չերեւի, թէ նա զվերոյգրեալ անցիցն յայտնեալ է արդեօք պօլիցիական կառավարութեան, վերջինս կազմեալ է զերեւելոցն զարձանագրութեան եւ յանձնեալ զայն

Հաշտարար դատարանին, վասն որոյ հրամանագրել նմա փութով յոյժ յայտնել պօլիցիական կառավարութեան զվերոյգրեալ անցիցն, խնդրել կազմել զարձանագրութիւն եւ յանձնել զայն Հաշտարար դատարանին վասն ի յայտ ածելոյ զգողս եւ զգողունիս, փոյթ ընդ փոյթ երթեկեկութիւն առնելով առ դատաւորն ըստ երեցփոխական պարտաւորութեանց իւրոց, եւ զընթացից գործոյն հետ զհետէ յայտնել Ատենիս, զորմէ խոնարհաբար յայտնել Սինօղին սրբոյ Էջմիածնի եւ այսու գրութեամբս հաղորդել Ձերումդ Գերազանցութեան ի տեղեկութիւն:

Անդամ ՄՈՎՍԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՅԱԹՆԵԱՆՅ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 1069, թթ. 1-2 շրջ., բնագիր, ձեռագիր:

5.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ԼՈՒՍԱԻՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ՝ ՆՈՐԱՇԷՆԻ Ս.
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿՐՊԱԿՆԵՐԻ
ՀՐԴԵՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Թ. 2485

8 Հոկտեմբերի 1879 թ.
Տփլիս

Ի ԼՈՒՍԱԻՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
Ի ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ
ԻՄԵՐԷԹԻ

Յայտարարութիւն

Ի Կոնսիստօրիայիս լուան զյայտարարութիւն պաշտօնակատարի երէցփոխանի Կուկիոյ Թանդոյեան եկեղեցւոյ յՑ Հոկտեմբերի տարւոյս, յորում գրէ. «Եւսոյն ամսոյս ի 4-րդմ ժամու առաւօտեան յաւուր կիւրակէի այրեցաւ եկեղեցապատկան կրպակսն ընդ թոռով եօթն, զորս ունէր կապալաւ Ադամ Փռանգեանց, թէ եւ վերոյիշեալ

կալուածն ապահովեալ էր ընկերութիւնն «Սալամանդր» ի գումարի 3500 ռուբլեաց, վասն բոլոր 12 կրպակաց, բայց այժմ որովհետեւ ունի զրկէլ ուսումնարանն ի կապալադրամոց, վասն որոյ խնդրեմ առնել զտնօրէնութիւն նախ՝ Համաձայն օրինաց ոչնչացուցանել զդաշնագիրն կռեալս ընդ Փռանգեանցի, եւ երկրորդ՝ զամենատեսակ արդիւնս եկեղեցւոյն դարձուցանել յօգուտ յուսումնարանին, յարակցելով թէ՛ հրդեհն պատահեալ էր յեկեղեցական կրպակէն, որ ունէր վարձով զԱղէքսանդրն Մելիք-Բաթբէտեանց, որոյ վասն ունեմ յայտնեալ որպէս պօլիցիային, նոյնպէս եւ ընկերութեան Սալամանդրի»:

Կարգաւորեցին. Նախ՝ խնդրել ի պօլիցիայէ քաղաքիս առաքել ի կոնսիստօրիայս զպօլիցիական ակտ կազմեալ ի մասին պատահեալ հրդեհի եւ յայտնել թէ՛ որպիսի ինչ տնօրէնութիւն արարեալ է ի կողմանէ պօլիցիայի ի հետեւումն յայտարարութեան պաշտօնակատարի երեցփոխանի: Երկրորդ՝ որովհետեւ վերոյիշատակեալ եկեղեցին եւ 12 կրպակք շինեալք են սեպհական ծախսովք Իսահակայ Թանդոյեանց եւ ընծայեալ եկեղեցւոյն, ուստի հրամանագրել պաշտօնակատարին երեցփոխանի՝ հրաւիրել զբարեպաշտուհի այրին կին նուիրատուին եւ յորդորել զնա նորոգել զայրեալ կրպակսն ըստ ջերմեռանդութեան իւրոյ որ առ եկեղեցին, եւ ի յիշատակ բարեգործ հանգուցեալ առն իւրոյ: Զվերոյգրելայն յայտ առնել խոնարհաբար Սինօդին սրբոյ էջմիածնի²:

Ատենապետ Կոնսիստօրիայի ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Անդամք ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՅ
ԳԵՈՐԳ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԹԷՄՈՒՐԱԶԵԱՆՅ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԲԷՆԲԼԵԱՆՅ
ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱԶԱՆԵԱՆ
Ատենադպիր ԲԵԿԺԱՆԵԱՆՅ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2975, թ. 1, բնագիր, ձեռագիր:

2 Այրված կրպակների վերանորոգման համար ծախսուեց 2000 ռուբլի, որից 600 ռուբլին պրամադրուեց «Սալամանդր» ընկերությունից, 800-ը՝ կրպակների եկամուտներից եւ 600-ը՝ Թանդոյեանի սեփականությունից (Ֆ. 56, ց. 4, գ. 2975, թ. 3):

6.

**Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱԻՈՐՋԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻ
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՊԱԿՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

29 Օգոստոսի 1886 թ.

Ս. Էջմիածին

Ի 29 Օգոստոսի 1886 ամի, ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ՝ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց Ի Լուսաւորչական Հայոց Սինօդի Սրբոյ Էջմիածնի լուան. Զյայտարարութիւն Վիճակային Կոնսիստորիայի Հայոց Տփիսիսու Ի 11-ն ամսոյս թ. 3047, յորում գրի «Ի Կոնսիստորիայիս լուան զգեկոցումն. երեցփոխանն Կուկիոյ Թանդոյեանց սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ յայտարարութեամբ յ9-ն Յուլիսի տարւոյս խնդրեալ էր զլուծումն Կոնսիստորիայիս յաղագս նորոգելոյ զեկեղեցապատկան հինգ կրպակս եւ շինելոյ կից նոցին զսենեակս ըստ օրինակի միւս եօթն կրպակաց եկեղեցւոյն: Ի հետեւումն որոյ Կոնսիստորիայս հրամանագրեաց երեցփոխանին մատուցանել սմին զպատկեր ծախուց կարեւոր նորոգութեանց կրպակացն եւ շինութեան սենեկաց նոցին: Ի կատարումն այսորիկ երեցփոխանն յայտարարութեամբ Ի 24-ն Յուլիսի առաջի արար Ատենիս զպահանջեալ ցուցակն, յորմէ երեւի, զի վասն յիշատակեալ շինութեանց հարկաւոր են ծախք ընդ ամէնն 766 ռուբ. 80 կօպէկ:

Ուստի Կարգաւորեցին. զվերոյգրելոցն յայտնելով Սինօդին սրբոյ Էջմիածնի, խնդրել խոնարհաբար զլուծումն նորին, յաղագս թոյլատրելոյ երեցփոխանին Կուկիոյ Թանդոյեանց սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ նորոգել զեկեղեցական հինգ կրպակս եւ շինել կից նոցին զսենեակս, գործադրելով առ այն յեկեղեցական արդեանց եօթն հարիւր վաթսուս վեց ռուբլի 80 կօպէկ, վերահասութեամբ հաշուատեսաց եկեղեցւոյն»:

Հրամայեցին – Տալ լուծումն Կոնսիստորիային Տփիսիսու յաղագս թոյլատրելոյ երեցփոխանի Կուկիոյ Թանդոյեանց սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ նորոգել զեկեղեցապատկան հինգ կրպակս եւ շինել կից նոցին զսենեակս՝ գործադրելով առ այն յեկեղեցական արդեանց զ766 ռուբ. 80

կօպէկ եւ այսու զայս գործ համարել աւարտեալ առ ի տալոյ ի դիւանն ի պահ:

Ատենապետ Սինօղի ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Անդամք ՄԿՐՏԻԶ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԵՍՐՈՎՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՅՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մակագրութիւն. Նախ պարտ է տեղեկանալ՝ թէ եկեղեցին զո՞րքան դրամս ունի, եւ ապա տնօրինել զարժանին:

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱԱ, Փ. 56, ց. 4, գ. 3242, թ. 2 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

7.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ
ԼՈՒՍԱԻՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՒԿԻՈՅ
ՆՈՐԱՇԷՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ
ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թ. 3027 4 Յուլիսի 1898 թ.
Տիֆլիս

Ի ԼՈՒՍԱԻՈՐԶԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
Ի ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԷ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ
ԻՄԵՐԷԹԻ

Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն երեսփոխանի Կոնկիոյ Նորաշէն Ա. Աստուածածին եկեղեցւոյ ի 17 Յուլիսի տարւոյս թիւ 26, յորում գրի. «Թէպէտեւ մեր եկեղեցին վաղուց կարիք ունի մեծ նորոգութեան, բայց փողի սղութեան պատճառաւ առ այժմ անհրաժեշտ եմ գտնում եկեղեցին ունենալով մօտ հազար ըութիւն, վերանորոգութեան մի կարեւոր մասն գոնեա անշուշտ կատարել, այն է՝ կանգնեցնել 1.

Մի մեծ կաֆիլի վառարան, որ արժէ մի հարիւր յիսուն ըուբլի (150).
 2. Երկու փոքր վառարաններ «Ուտեր Մարկովի», իւրաքանչիւրը եօթանասուն եւ հինգ ըուբլի, երկուսը՝ մի հարիւր յիսուն ըուբլի (150).
 3. Աղիւսէ նախադուռն վեց խորանարդ սաժ., մի խորանարդ սաժ. արժէ եօթանասուն եւ հինգ ըուբլի, վեց խոր. սաժ. կարժենայ չորս հարիւր յիսուն ըուբլի (450). 4. Մի հատ դուռն կարժենայ յիսուն ըուբլի (50). 5. Մէկ երկաթի ծածկոց (զոնտիկ) եկեղեցու եւ փողոցի դռների արանքում կարժ. երկու հարիւր ըուբլի (200): Որ է ընդամենը վերանորոգութեան ծախք հազար ըուբլի (1000 ռ.), որոյ համար խնդրեմ թոյլտուութիւն որքան կարելի է շուտ, որ գոնեա այս ձմեռն ունենալ վառարաններ եւ նախադուռն: Իսկ երբ պ. Մ. Կոստանեանցից կստացուի մեր եկեղեցուն հասանելի կապալադրամը, այն ժամանակ նոր յայտարարութեամբ կըլիմեմ Վիճակային Ատենիդ մնացեալ վերանորոգութեանց համար:

Կարգաւորեցին. խնդրել խոնարհաբար զլուծումն Սինօդի Սրբոյ Էջմիածնի յաղագս թոյլատրելոյ երեսփոխանին Կոնկիոյ Ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցւոյ գործադրելոյ յեկեղեցական դրամոց զմի հազար ըուբլիս ի պէսս վերոյիշեալ նորոգութեան³:

Անդամք կոնսիստորիայի՝ ԹԱԴԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՌԻԻԾԵԱՆ
 ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԲԱՐՍԵՂԵԱՆՅ
 ԳԱՐՐԻԷԼ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ
 Ատենադպիր Յ. ՏԷՐ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3366, թ. 3 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

³ 1898 թ. Օգոստոսի 8-ին սինօդը քննել է իր համաձայնութիւնը՝ եկեղեցին վերանորոգելու (ֆ. 53, ց. 1, գ. 3366, թ. 4):

8.

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿՐՊԱԿՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՒ ՏԵՂՈՒՄ ՊԱՐԻՍՊ
ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

18 Փետրվարի 1901 թ.

Տփլիս

Արձանագրութիւն

Ի 18-ն Փետրուարի 1901 ամի ի Տփլիս

Մենք՝ Կոնկիոյ Թանգույեանց Ա. Աստուածածնի եկեղեցւոյ ծխականքս, Համաձայն Հրամանի Վիճակային Կոնսիստօրիայի յ31-ն Յուլիսի 1900 ամի թ. 3311. միաձայն Համաձայնութեամբ ցանկամք զեօթն կրպակսն ի դուռն եկեղեցւոյն մերոյ ի հիմանց քակեալ եւ միանգամայն վերացուցանեալ եւ ի տեղի որոց կառուցանել զորմն մի կամ երկու արշին բարձրութեամբ եւ ի վերայ որոյ շինել զվանդակ, որով շքեղացուցանել զեկեղեցին գոնէ ի հարաւային կողմանէ. առ որ ստորագրեմք.

(յետեւում է 39 ստորագրութիւն)

Ի ներկայութեան իմում միաձայն Համաձայնութեամբ կազմեալ զարձանագրութիւնն ստորագրեցին վերոյգրեալ ծխականքն:

Գործակալ ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3411, թ. 5 եւ շրջ., բնագիր, ձեռագիր: